Թողարկման 19-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2012

Մարտ

թիվ 3 (163)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

5 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «Անելիք բանկ» ՓԲԸ-ին և «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ-ին «Բիստրայա Պոչտա» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև «ԳՐԱՎԵՎՎԱՐԿ» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Մելգրի Յունիոն» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «Արարատբանկ» ԲԲԸ-ին և «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ին «Յունիստրիմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև «Մոբիդրամ» ՓԲԸ-ի «Հյուսիսային պողոտա» մասնաճյուղը հաշվառելու, «Կվադրակոմ» ՍՊԸ-ի մի շարք մասնաճյուղեր հաշվառումից հանելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ-ի «Դավիթաշեն» մասնաճյուղը գրանցելու, «Ֆինքա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի մի շարք ներկայացուցչությունների գրանցումից հանելու և մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև 15 ՍՊԸ-ների, 1 ՓԲԸ-ի, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու և 4 ՍՊԸ-ների, 2 ՓԲԸ-ների, 1 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 39-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 224-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 40-Ն որոշումը «2012 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4, 1/2 և 1 տրոյան ունցիա քաշով արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

11 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 48Ա):
- ***«Բիստրայա պոչտա» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Անելիք բանկ» փակ բաժնետիրական և «Պրոմեթեյ բանկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 51Ա, 52Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «ԳՐԱՎԵՎՎԱՐԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 53Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Մելգրի Յունիոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 55Ա):
- ***«Յունիստրիմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Արարատբանկ» բաց և «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 56Ա, 57Ա):
- ***Դադարեցվել են*** «Մոբիդրամ» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիսային պողոտա», ինչպես նաև «Սայաթ-Նովա», «Ամիրյան», «Էրեբունի», «Շենգավիթ», «Դավիթաշեն», «Վարդանանց», «Ազատություն», «Կիևյան», «Կոմիտաս», «Աջափնյակ», «Կորյուն», «Ավան», «Իսահակյան», «Վանաձոր», «Արտաշատ», «Էջմիածին», «Արմավիր», «Գյումրի», «Իջևան» և «Կապան» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 58Ա, 74Ա):
- ***Դադարումից հանվել են*** «Կվադրակոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34 մասնաճյուղերը (որոշում թիվ 75Ա):
- ***Գրանցվել է*** «ՊրոԿրեդիտ բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Դավիթաշեն» մասնաճյուղը (որոշում թիվ 1/277Ա):
- ***Գրանցումից հանվել են*** «Ֆինքա» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Մասիս», «Բերդ», «Գորիս» ներկայացուցչությունները և ***գրանցվել*** «Մասիս», «Բերդ», «Գորիս» մասնաճյուղերը (որոշում թիվ 1/281Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 15 սահմանափակ պատասխանատվությամբ, 1 փակ բաժնետիրական ընկերությունների, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 13415500 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով (որոշումներ թիվ 1/177Ա, 1/209Ա, 1/220Ա-1/222Ա, 1/231Ա-1/234Ա, 1/236Ա, 1/240Ա, 1/242Ա, 1/244Ա, 1/247Ա, 1/265Ա, 1/248Ա, 1/183Ա, 1/219Ա) և 4 սահմանափակ պատասխանատվությամբ, 2 փակ բաժնետիրական ընկերությունների, 1 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/174Ա, 1/176Ա, 1/241Ա, 1/243Ա, 1/175Ա, 1/206Ա, 1/262Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 224-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով վերանայել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված օֆշորային տարածքների ցանկը,

հիմք ընդունելով Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության կողմից 2011 թվականի սեպտեմբերի 14-ին հրապարակված՝ միջազգայնորեն համաձայնեցված հարկային ստանդարտին տարածքների համապատասխանության վերաբերյալ առաջընթացի հաշվետվությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի «Օֆշորային տարածքների ցանկը հաստատելու մասին» թիվ 224-Ն որոշմամբ հաստատված «Օֆշորային տարածքների ցանկը» շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
24 փետրվարի 2012 թ., N39-Ն

Հավելված
Հ ա ս տ ա տ վ ա ծ է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի փետրվարի 21-ի
թիվ 39-Ն որոշմամբ

Հավելված 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հուլիսի 28-ի
թիվ 224-Ն որոշման

Օֆշորային տարածքների ցանկ

1. Մոնսերրաթ
2. Նաուրու
3. Նիու
4. Գվատեմալա
5. Ուրուգվայ

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. փետրվարի 21-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.03.2012 թ. (ՀՀԳՏ N8 (421), 15.03.2012):

*2012 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4, 1/2 և 1 տրոյան ունցիա քաշով արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 340 Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2012 թվականի ապրիլի 2-ից շրջանառության մեջ դնել 2012 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4, 1/2 և 1 տրոյան ունցիա քաշով արծաթե ներդրումային դրամները:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված ներդրումային դրամների նկարագրությունը, որը ներդրումային դրամների էսքիզների հետ մեկտեղ ներկայացված է Հավելվածում (կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 փետրվարի 2012 թ., N 40-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի փետրվարի 21-ի
թիվ 40-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. 2012 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2012»: Աջ կողմում «1/4 OZ» և «Ag 999» մակագրություններն են, իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Դրամի էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:
Դրամը հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» դրամահատարանում:

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/4 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	20,18±0,07 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2 000 000 հատ

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. փետրվարի 21-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.03.2012 թ. (ՀՀԳՏ N8 (421), 15.03.2012):

1.1. 2012 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





2. 2012 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «200 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2012»: Աջ կողմում «1/2 OZ» և «Ag 999» մակագրություններն են, իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Դրամի էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Դրամը հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» դրամահատարանում:

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	200 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/2 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	27,66±0,15 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2 000 000 հատ

2.1. 2012 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





3. 2012 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

Դրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «500 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2012»: Աջ կողմում «1 OZ» և «Ag 999» մակագրություններն են, իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Դրամի դարձերեսին պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

Դրամի էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Դրամը հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» դրամահատարանում:

Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	38,60 ± 0,3 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 8 000 000 հատ

3.1. 2012 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՐՏ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի ապրիլի 10-ի նիստի «2012 թվականի ապրիլի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012 թվականի ապրիլի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 15
Իրական հատվածի ցուցանիշներ 18
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 21
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 26
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 27
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 37
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 54
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 66
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 68
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 73
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (10.04.2012)

2012 թվականի ապրիլի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2012 թվականի ապրիլի 10-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Ն. Երիցյանը, խորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Ա. Դարբինյանը, Օ. Աղասյանը, Ա. Չիլինգարյանը:

Խորհրդի նիստում, որը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները: 2012 թվականի մարտին արձանագրվել է 0.1% գնաճ, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը, նախորդ ամսվա ցուցանիշի համեմատությամբ նվազել է 0.8 տոկոսային կետով և կազմել 2.2%՝ ձևավորվելով տատանումների թույլատրելի միջակայքից փոքր-ինչ ցածր մակարդակում: Ընդ որում, պարենային ապրանքների գների աճի նպաստումը 12-ամսյա ցուցանիշին կազմել է 1.2 տոկոսային կետ, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.6 տոկոսային կետ, ծառայությունների սակագների աճի նպաստումը՝ 0.4 տոկոսային կետ: Ամսական գնաճը պայմանավորված էր հիմնականում բենզինի և վառելիքի գների համապատասխանաբար 3.5% և 1.6% աճով:

2011 թվականին ԿԲ իրականացրած դրամավարկային քաղաքականությունը հանգեցրել է գնաճի տեմպերի նվազմանը և կայունացմանը, ինչն ուղեկցվել է տնտեսական ակտիվությամբ: ԱՎԾ-ն հրապարակել է 2011 թվականի տնտեսական աճի ցուցանիշը՝ 4.6%, որը համապատասխանում է ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի հիմքում դրված տնտեսական աճի ցուցանիշին և համահունչ է ՀՀ ԿԲ կանխատեսումներին: Նույն միտումները պահպանվել են նաև 2012 թվականի սկզբին. 2012 թվականի հունվար-փետրվարին ՏԱՑ-ը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 5.6%, ինչն արդյունք է արդյունաբերությունում՝ 18.5% և ծառայությունների ոլորտում 9.8% թողարկման ծավալների աճի: Շինարարության ճյուղում անկումը կազմել է 0.1%, իսկ գյուղատնտեսության ճյուղում, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատությամբ, թողարկման ծավալները չեն փոփոխվել. անասնապահությունում 0.1% անկումը չեզոքացվել է բուսաբուծության թողարկման ծավալների 6% աճով:

2011 թվականին շարունակել է բարելավվել ընթացիկ հաշիվը. ընթացիկ հաշվի պակասորդ/ՀՆԱ հարաբերությունն էապես նվազել է և կազմել 11%: Ինչ վերաբերում է 2012 թ. տարեսկզբի արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշներին, ապա 2012 թվականի հունվար-փետրվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արտահանումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՖՕԲ) ավելացել է 12.3%-ով, իսկ ներմուծումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՍԻՖ)՝ 11.4%-ով:

2012 թվականի տարեսկզբին հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա թողել է թույլ զսպող ազդեցություն՝ պայմանավորված պետական եկամուտների որոշ չափով գերակատարմամբ և ծախսերի տնտեսմամբ (ՀՀ

կառավարության կողմից սահմանված եռամսյակային համամասնությունների և ԿԲ կանխատեսումների համեմատությամբ):

Խորհրդի նիստում ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի զարգացումները: ԿԲ-ն մարտին շարունակել է չեզոք դրամավարկային քաղաքականության իրականացումը՝ ելնելով առաջիկա ժամանակահատվածում գնաճի՝ տատանումների թույլատրելի միջակայքում գտնվելու կանխատեսումներից և բազային սցենարով ՀՀ տնտեսության զարգացումներից: Թեև փետրվարի սկզբին արդեն պարզ էր, որ առաջին եռամսյակի ավարտին գնաճը ձևավորվելու է տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանի շուրջ, սակայն հաշվի առնելով մինչև 2012 թվականի տարեվերջ գնաճի բազային կանխատեսումները՝ ԿԲ-ն պահպանել է քաղաքականության չեզոքությունը: Ֆինանսական շուկայի զարգացումները մարտին կրել են ինչպես իրականացված դրամավարկային քաղաքականության, այնպես էլ դեկտեմբերին պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխության հետևանքով ժամանակավոր աճից հետո տոկոսադրույքների շարունակական նվազման ազդեցությունը: Ընդհանուր առմամբ, արձանագրվել է տոկոսադրույքների նվազման միտում. շուկայական ռեպո միջին տոկոսադրույքը փետրվարի համեմատությամբ նվազել է 1.07 տոկոսային կետով և կազմել 9.81%, միջբանկային ռեպո տոկոսադրույքը՝ 1.27 տոկոսային կետով և կազմել 9.46%: Միաժամանակ, մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում նախորդ ամսվա համեմատ միջին տոկոսադրույքը մնացել է գրեթե անփոփոխ և կազմել 8.77% (նվազումը՝ 0.13 տոկոսային կետ): Բորսայական միջբանկային վարկերի միջին տոկոսադրույքը նախորդ ամսվա համեմատ փոքր-ինչ աճել է և կազմել 8.12% (աճը՝ 0.39 տոկոսային կետ):

2012 թ. մարտին արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը նախորդ ամսվա համեմատ դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.13% տոկոսով՝ կազմելով 389.13 դրամ, եվրոյի նկատմամբ՝ մնացել է անփոփոխ՝ կազմելով 514.2 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 1.66 %-ով՝ կազմելով 13.26 դրամ: Նախորդ տարվա մարտ ամսվա համեմատ դրամի միջին շուկայական փոխարժեքը դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 5.32 %-ով, եվրոյի նկատմամբ արժևորվել է 0.32 %-ով և ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 2.34 %-ով:

Ֆինանսական շուկայի զարգացումների պայմաններում դրամավարկային ցուցանիշները մարտի 24-ի դրությամբ արձանագրել են հետևյալ միտումները. 12-ամսյա կտրվածքով դրամային ավանդների 44.1% աճի պայմաններում դրամային զանգվածն առաջանցիկ՝ 28.9% աճ է արձանագրել փողի զանգվածի համեմատությամբ: Արտարժութային ավանդների 12-ամսյա աճը կազմել է 16.6% (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 10.5%): Արդյունքում, դոլարայնացման մակարդակն այդ ժամանակահատվածում նվազել է 2.4 կետով (ավելի քան 5.4%-ով): Պահպանվել են վարկավորման բարձր աճի տեմպերը՝ 34.2%. ընդ որում, դրամով վարկավորումն ավելացել է 21.3%-ով:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

2012 թվականի առաջին եռամսյակում ԱՄՆ-ի և Ճապոնիայի առաջնորդող տնտեսական ցուցանիշները, ինչպես նաև Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների հետ կապված լարվածության թուլացումը լավատեսական հեռանկար ստեղծեցին համաշխարհային տնտեսության համար: Չնայած ձևավորված դրական սպասումներին՝ էապես մեծացել են աշխարհաքաղաքական հիմնախնդիրներով պայմանավորված համաշխարհային տնտեսական ռիսկերը՝ հատկապես նավթամթերքի գների կտրուկ աճը (Brent տեսակի նավթի գինն առաջին եռամսյակի ընթացքում ավելացել է 8.5%-ով՝ նաև պայմանավորված պահանջարկի աճով):

Ըստ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տվյալների՝ մարտին պարենային ապրանքների գների աճը փետրվարի համեմատությամբ կազմել է 0.5%՝ պայմանավորված հիմնականում բուսական և կենդանական յուղերի, մսամթերքի, հացահատիկի գների աճով: Գների անկում է արձանագրվել կաթնամթերքի շուկայում:

ԱՄՆ ԴՊՀ-ն, չնայած նավթամթերքի գների աճով պայմանավորված գնաճային ճնշումների առկայությանը, հիմք ընդունելով ԱՄՆ տնտեսության զարգացման չափավոր տեմպերը՝ անփոփոխ է թողել քաղաքականության տոկոսադրույքը: Եվրոպական կենտրոնական բանկը նույնպես անփոփոխ է թողել քաղաքականության տոկոսադրույքը, թեև գնաճի կանխատեսումները գերազանցում են նպատակային ցուցանիշը:

Խորհուրդը գնահատեց, որ ՀՀ-ում գնաճային միջավայրի վրա ազդեցության առումով արտաքին հատվածի զարգացումները հիմնականում Դրամավարկային քաղաքականության ծրագրի բազային սցենարի շրջանակներում են. առաջատար մի շարք երկրներում տնտեսական ակտիվության դրական միտումների պայմաններում պարենային ապրանքների միջազգային գները ձևավորում են թույլ գնաճային միջավայր: Մինչդեռ շարունակում է դրսևորվել Դրամավարկային քաղաքականության ծրագրում նախանշված՝ միջազգային շուկայում նավթամթերքի գների աճի ռիսկը՝ պայմանավորված Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական զարգացումներով:

Խորհուրդն արձանագրեց, որ գնաճային միջավայրի վրա ՀՀ տնտեսության զարգացումների ազդեցությունը համապատասխանում է Դրամավարկային քաղաքականության ծրագրի բազային սցենարին և, ընդհանուր առմամբ, ոչ գնաճային է. անվանական աշխատավարձերի աճի տեմպը փոքր-ինչ գերազանցում է արտադրողականության աճի տեմպը, մասնավոր ծախսումների աճը դեռևս գնաճային ճնշումներ չի առաջացնում, իսկ հարկաբյուջետային քաղաքականությունը թույլ զսպող ազդեցություն է թողնում:

Խորհուրդն ամփոփեց, որ համաշխարհային և ՀՀ տնտեսությունների զարգացման ներկա հեռանկարում իրատեսական է կանխատեսվող 12-ամսյա ժամանակահատվածում գնաճի ձևավորումը 4% նպատակային ցուցանիշի ±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում: Այս իրավիճակում խորհուրդը նպատակահարմար է գտնում պահպանել քաղաքականության տոկոսադրույքի 8% մակարդակը, որը գնաճային միջավայրի վրա կթողնի չեզոք ազդեցություն:

2012 թվականի ապրիլի 10-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%: Լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները սահմանվում են համապատասխանաբար՝ 11.0% և 5.0%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2012 թ. փետրվար*	*2012 թ. փետրվարի իրական աճի հնդեքսը 2011 թ. փետրվարի նկատմամբ (%)*	*2012 թ. մարտ*	*2012 թ. մարտի իրական աճի հնդեքսը 2011 թ. մարտի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	106.7[1]	-	106.6
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	77341.6	116.2	85581.3	112.6
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	767.5	130.3	700.8	116.1
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	22174.3	100.0	27077.6	100.1
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	128054.7	101.2	148075.6	100.1
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	10864.6	99.5	20710.0	89.5
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	66006.1[1]	111.3[1]	74886.1	112.6
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	112937[2]	101.6	116099[1]	101.9

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2012 թ.	*Սպառողական գների հնդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների հնդեքս*	*Գների հնդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների հնդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.6	98.6[1]	99.5	101.5
Փետրվար	99.1	104.2	101.2	98.3
Մարտ	100.1	103.1	95.4	98.2
2012 թ. հունվար – մարտը 2011 թ. հունվար – մարտի համեմատությամբ	103.3	106.2	94.0	104.8

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2010*	*2011*	*2012*	*2012*	*2012*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.7	3.4 [2]	3.6	3.6	4.8
Փետրվար	0.3	0.9 [2]	-0.9	2.6	3.0
Մարտ	0.8	0.8	0.1	2.7	2.2
Ապրիլ	1.3	-0.2			
Մայիս	1.0	0.0			
Հունիս	-0.8	-1.4			
Հուլիս	-0.8	-3.0			
Օգոստոս	1.3	-0.6			
Սեպտեմբեր	-0.2	0.8			
Հոկտեմբեր	1.0	0.3			
Նոյեմբեր	1.6	1.2			
Դեկտեմբեր	1.8	2.5			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	9.4	4.7			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	8.2	7.7			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2012թ. մարտը 2012 թ. փետրվարի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**100.1**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**99.9**	**-0.06**
Միրգ	97.0	-0.11
Կաթնամթերք	98.6	-0.06
Կենդանական և բուսական յուղ	99.4	-0.02
Հացամթերք	100.9	0.09
Բանջարեղեն և կարտոֆիլ	100.4	0.03
Սուրճ, թեյ, կակաո	100.4	0.01
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.8**	**0.12**
Հագուստ և գործվածք	101.1	0.03
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	101.9	0.05
Կոշկեղեն	102.3	0.04
Գեղահարդարման ապրանքներ	100.5	0.01
Ծառայություններ, որից՝	**100.2**	**0.06**
Բուժսպասարկման	101.3	0.05
Տրանսպորտի	101.4	0.05
Կապի	99.4	-0.03

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	2009	2010	2011	2012
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	-0.29	0.48	0.71[4]	0.65
Փետրվար	-0.53	0.74	0.42[4]	0.08
Մարտ	1.14	0.82	0.64[4]	0.04
Ապրիլ	1.46	0.70	0.45[4]	
Մայիս	0.41	0.04	0.32[4]	
Հունիս	0.25	-0.22	0.37[4]	
Հուլիս	-0.22	-0.42	0.21[4]	
Օգոստոս	0.37	0.17	0.27[4]	
Սեպտեմբեր	0.72	0.63	0.42[4]	
Հոկտեմբեր	0.48	1.21	0.36[4]	
Նոյեմբեր	0.62	1.18	0.41	
Դեկտեմբեր	0.61	0.63	0.55	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	4.63	6.20	6.28[4]	5.27
Փետրվար	3.02	7.59	5.75[4]	4.91
Մարտ	3.33	7.14	5.68[4]	4.27
Ապրիլ	3.47	6.35	5.42[4]	
Մայիս	3.37	5.92	5.75[4]	
Հունիս	3.36	5.40	6.32[4]	
Հուլիս	3.20	5.16	6.95[4]	
Օգոստոս	3.52	4.96	7.01[4]	
Սեպտեմբեր	3.71	4.86	7.01[4]	
Հոկտեմբեր	4.16	5.53	6.09[4]	
Նոյեմբեր	4.72	6.16	5.37	
Դեկտեմբեր	5.25	6.26	5.29	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**104.27**
Տավարի միս	0.48
Խոզի միս	0.44
Ծխախոտ «Գառնի»	0.23
Բենզին	0.21
Կարամել	0.20
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.20
Հավի բուդ	0.18
Կարագ	0.17
Աղացած սև սուրճ	0.14
Պանիր տնական (կովի կաթից)	0.13
Նրբերշիկ	0.11
Ձու	0.10
Եփած երշիկ	0.09
Թթվասեր	0.07
Պղպեղ (սև)	0.07
Մածուն	0.06

[1] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*

[2] *Տվյալները վերահաշվել են ՀՀ ԱՎԾ կողմից:*

[3] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*

[4] *Տվյալները վերահաշվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2012 թ. հունվար - փետրվար (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար - փետրվարը 2011 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)*	*2012 թ. հունվար – մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար – մարտը 2011 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	185.1	112.3	347.6	132.4
Ներմուծում *(ՍԻՖ)*	593.0	111.4	956.1	109.8
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	407.9	111.0	608.5	100.0

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հունվար-մարտ			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	206114	34065	172049	1364892	186441	1178451
ԱՄՆ	26943	27305	-363	138384	145332	-6949
Ուկրաինա	4179	5163	-985	26790	25151	1640
Ղազախստան	4541	826	3714	23407	2274	21133
Գերմանիա	5407	5270	138	25601	27604	-2003
Իսպանիա	2082	2165	-82	9891	10142	-252
Ֆրանսիա	3979	3088	892	18872	24773	-5901
ԱՄԷ	5259	14061	-8802	19141	57937	-38797
Չինաստան	1055	15525	-14470	3518	83256	-79738
Թուրքիա	759	8245	-7486	6197	36078	-29881
Այլ երկրներ	66432	45452	20980	323341	224558	98783
Ընդամենը	**326749**	**161165**	**165584**	**1960033**	**823547**	**1136486**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Մարտ			Հունվար-մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	92195	16462	75732	251160	42066	209094
ԱՄՆ	11388	10564	824	30080	27004	3076
Ուկրաինա	1656	1497	160	4200	3792	408
Ղազախստան	1904	96	1808	5580	359	5222
Գերմանիա	2579	4265	-1686	6213	8867	-2654
Իսպանիա	476	695	-219	1735	1913	-178
Ֆրանսիա	1796	2546	-750	3901	4376	-475
ԱՄԷ	1010	4448	-3438	2775	12429	-9654
Չինաստան	228	6714	-6486	860	13556	-12696
Թուրքիա	253	3200	-2947	1023	7093	-6069
Այլ երկրներ	27353	16746	10607	62328	45515	16814
Ընդամենը	**140837**	**67232**	**73605**	**369856**	**166969**	**202887**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հունվար-մարտ			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	195526	27483	168043	1295163	141352	1153811
ԱՄՆ	18035	6626	11409	74380	27331	47049
Ուկրաինա	3862	3440	421	25076	16202	8874
Ղազախստան	4248	518	3730	20611	1769	18842
Գերմանիա	2679	1318	1362	10695	6905	3790
Իսպանիա	1809	737	1072	7674	3052	4622
Ֆրանսիա	2487	1012	1475	10874	7668	3206
ԱՄԷ	653	1272	-619	3387	7660	-4273
Չինաստան	135	1318	-1183	529	8748	-8219
Թուրքիա	308	1156	-849	2136	4981	-2845
Այլ երկրներ	21619	8632	12987	96434	38934	57499
Ընդամենը	**251361**	**53511**	**197850**	**1546959**	**264602**	**1282357**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Մարտ			Հունվար-մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	87634	13167	74467	224678	32573	192105
ԱՄՆ	7191	2295	4896	18547	6268	12279
Ուկրաինա	1449	1150	300	3833	2945	888
Ղազախստան	1535	96	1439	3777	347	3430
Գերմանիա	879	717	163	2526	2250	276
Իսպանիա	465	224	241	1584	582	1001
Ֆրանսիա	956	436	520	2530	1190	1340
ԱՄԷ	226	681	-456	838	1542	-705
Չինաստան	47	1029	-982	96	2117	-2021
Թուրքիա	103	315	-212	460	820	-360
Այլ երկրներ	7168	3485	3683	18363	10263	8100
Ընդամենը	**107651**	**23593**	**84058**	**277232**	**60898**	**216334**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2]

2011	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	139.4	137.5	133.3	128.2	127.7	126.2	125.5	125.1	128.3	127.5	126.3	131.7
Անվանական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	228.0	224.6	218.4	211.6	211.7	211.9	216.5	217.3	221.7	221.0	217.6	221.6
2012	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	135.4	131.0	129.6									
Անվանական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	220.5	216.2	215.7									

[1] Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով: Հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը:

[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ նախնական գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2011	2012		
	Դ [3]	Հ [4]	Փ [4]	Մ [5]
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնորհման միջոցների)*	1932.5	**1730.3**	**1758.1**	**1708.7**
Համախառն միջազգային պահուստներ	1932.5	**1730.3**	**1758.1**	**1708.7**
Ոսկի	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	57.0	57.6	54.8	54.6
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0
Արտարժույթ [2]	1875.4	1672.7	1703.3	1654.1


[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

[4] *Տվյալները վերանայվել են:*

[5] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2011	2012		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**754.1**	**763.0**	**770.0**	**769.3**
ԱՄՀ վարկ	518.0	523.8	524.1	522.2
ՀՓԻ տեղաբաշխում	135.1	136.5	136.9	136.3
Այլ վարկեր	100.7	101.9	108.3	110.5
Այլ պարտավորություններ	0.3	0.8	0.6	0.2

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*

[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*


[3] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	Կենտրոնական բանկի	Ընդամենը	Կենտրոնական բանկում Կառավարության ոչ ռեզիդենտների	Կենտրոնական բանկում Կառավարության ռեզիդենտ այլ	Ռեզիդենտ բանկերում Կառավարության	Ռեզիդենտ ոչ բանկերում Կառավարության	Ընդամենը	
2011								
Դեկտեմբեր	12953	12953	75721	3418	1	547	79687	**-66735**
2012								
Հունվար	13193	13193	98748	3019	1	549	102316	**-89123**
Փետրվար	12719	12719	97549	3017	1	551	101119	**-88400**
Մարտ	14053	14053	92628	3012	1	554	96195	**-82142**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Ժամկետ	**Փողի բազա** [1] *(մլն ՀՀ դրամ)*	**Շրջանառությունում կանխիկ դրամ** *(մլն ՀՀ դրամ)*	**Ցպահանջ ավանդներ դրամով** *(մլն ՀՀ դրամ)*	**M1** [2] *(մլն ՀՀ դրամ)*	**Ժամկետային ավանդներ դրամով** *(մլն ՀՀ դրամ)*	**M2** [3] *(մլն ՀՀ դրամ)*	**Արտարժութային ավանդներ** *(մլն ՀՀ դրամ)*	**M2X** [4] *(մլն ՀՀ դրամ)*	**Փողի բազայի** [5] **հակադրում**	**Դրամային զանգվածի** [6] **հակադրում**
2011										
Դեկտեմբեր	671271	349407	164385	513792	145644	659437	467542	1126978	1.68	1.16
2012										
Հունվար	572232	318965	154751	473716	145677	619394	476707	1096101	1.92	1.18
Փետրվար	562946	319511	154705	474216	157250	631466	482181	1113647	1.98	1.22
Մարտ	553757	321270	156682	477951	171903	649855	484507	1134362	2.05	1.25

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
700000
630000
560000
490000
420000
350000
280000
210000
140000
70000
0
08
09
10
11
12
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
08
09
10
11
12
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
05
06
07
08
09
10
11
12


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
75
70
65
60
55
50
45
05
06
07
08
09
10
11
12


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2011					
Հունվար	468928	283394	397594	488612	879365
Փետրվար	489953	289756	408898	510273	900769
Մարտ	508844	297115	423929	534302	924571
Ապրիլ	516360	301953	430757	538589	942240
Մայիս	512353	305597	436378	548340	967806
Հունիս	537286	306566	442832	557965	984844
Հուլիս	535625	309709	453699	571616	1003282
Օգոստոս	579815	312907	454086	578051	1014568
Սեպտեմբեր	566078	314258	457473	580468	1026427
Հոկտեմբեր	574417	317752	462178	590521	1046747
Նոյեմբեր	582996	319199	466064	597911	1065117
Դեկտեմբեր	604639	321537	477315	616199	1084433
2012					
Հունվար	579873	324411	483183	625076	1096265
Փետրվար	574568	327602	485627	643706	1101894
Մարտ	562330	337773	497615	671762	1129480

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում :
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012		
	Դ [2]	Հ [3]	Փ [3]	Մ [4]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***460046***	***374707***	***383279***	***365409***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***211224***	***197524***	***179667***	***188349***
Կառավարություն	-66735	-89123	-88400	-82142
Բանկեր	137020	120020	98737	97975
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	46345	28597	6523	11534
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0
Ավանդներ (-)	0	0	0	-7001
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	140939	166627	169330	172516
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***671271***	***572232***	***562946***	***553757***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	398777	360151	359843	361559
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	163177	155780	152186	152842
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	102513	48678	43849	31908
Այլ հաշիվներ	6803	7622	7068	7449
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	6715	7561	7002	7360
Այլ հաշիվներ արտարժույթով	88	61	66	89
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-85339***	***8571***	***-17870***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-13700***	***-17857***	***8682***
Կառավարություն	-	-22388	722	6258
Բանկեր	-	-17000	-21282	-763
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-17749	-22074	5011
ավանդներ (-)	-	0	0	7001
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	25687	2703	3186
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-99039***	***-9286***	***-9188***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-38626	-308	1716
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-7397	-3595	656
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-53835	-4829	-11941
Այլ հաշիվներ	-	819	-554	381
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	846	-559	358
Այլ հաշիվներ արտարժույթով	-	-27	5	23
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-18.6***	***2.3***	***-4.7***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-6.5***	***-9.0***	***4.8***
Կառավարություն	-	-33.5	0.8	7.1
Բանկեր	-	-12.4	-17.7	-0.8
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	18.2	1.6	1.9
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-14.8***	***-1.6***	***-1.6***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-9.7	-0.1	0.5
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-4.5	-2.3	0.4
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-52.5	-9.9	-27.2
Այլ հաշիվներ	-	12.0	-7.3	5.4

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 385.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[3] ՀՀ ԿԲ զուտ միջազգային պահուստները վերանայվել են:

[4] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012		
	Դ	Հ[2]	Փ[2]	Մ[2]
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-422628**	**-378223**	**-387655**	**-412042**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	144795	180008	172105	145581
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-540514	-519958	-525021	-518411
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-26909	-38273	-34739	-39212
ԶՆԱ	**1192853**	**1147785**	**1174122**	**1215154**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	64951	60498	53685	68161
Պահանջներ Կառավարության նկատմամբ	147289	143338	136381	149275
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-82338	-82840	-82696	-81113
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	190864	142343	152216	142581
Պահանջներ ԿԲ նկատմամբ	322531	245320	236071	231791
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (-)	-131668	-102977	-83855	-89210
Տնտեսություն	1249805	1263814	1300739	1338209
Ջեռնարկություններ	727559	760290	786795	808273
Դրամով	156025	156900	155778	156360
Արտարժույթով	568780	600625	628243	649125
Արժեթղթեր	2754	2766	2774	2789
Տնային տնտեսություններ	484476	458685	469810	484578
Դրամով	313857	312846	317230	326705
Արտարժույթով	170619	145839	152580	157873
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	13864	20588	19289	19072
Դրամով	1383	1612	1566	1517
Արտարժույթով	12481	18975	17723	17555
Այլ ֆինանսական կազմակերպություններ	23907	24251	24844	26286
Դրամով	18570	18620	18657	19535
Արտարժույթով	5337	5631	6187	6751
Զուտ այլ ակտիվներ	-312766	-318871	-332518	-333797
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	27663	28771	16045	14884
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	9929	1497	1182	1080
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	-10087	-1106	-1002	-733
Ներդրումներ փայաբաժիններում	3007	2283	2332	2186
Միջբանկային պահանջներ	56576	48009	63829	55144
Այլ ակտիվներ	192599	122623	125000	128356
Միջբանկային պարտավորություններ (-)	-55508	-46741	-64987	-56400
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-5535	-684	-690	-697
Կապիտալ հաշիվներ (-)	-357917	-360503	-356841	-362524
Այլ պարտավորություններ (-)	-173493	-113020	-117386	-115093
ԱՎԱՆԴՆԵՐ	**770226**	**769562**	**786467**	**803112**
Դրամով ավանդներ	299780	289949	300570	316553
